

- Մէկ չը կշննայ ձէն խանի:
Խանտիւթ խաթիւն կգեայ, Դաւթը ձեռնէն կը բռնը.
Յենդիւց կը քեշի վուր տանը յիւր օգէն:
Դաւիթ ըռըկիր ի, չէրթայ:
Էդա մարդեր էնտե կրիշկին:
Քեանիմ¹ Խանտիւթ խաթոււն ձեռ կը թլի Դաւթըն, քեշի:
ՉԴաւիթ չը կէրի գիտնուց կայնայրցի:
284. Կըսի. — Դաւիթ, վրէ՞ չըս իգեայ:
Կըսի. — Չըմ իգեայ.
Իս ար կանգնիմ, իմ ձին խիծնիմ, էրթամ իմ տուն:
Խանտիւթ խաթիւն Դաւթըն կաղաչի, էրթանք տուն:
285. Տնաւի՛ր, լի՛նչքան շեւտ կըռըկիս, էրթանք իմ յեօգէն:
Էրկու խապար կայ, իս քի կտամ, էլի կերթաս, գնա,
Խօ գեօռով քի չըմ բռնի:
286. Դաւիթ կըսի. — Չըմ իգեայ:
Կըռըկի, կը զարկի Խանտիւթ խաթիւնին, գմշկըլի գեն:
Կը գեայ յիւր ձին կը խիծնի, կընկնի ճանբախ.
Դաւիթ վար ձիուն հա կգեայ, հա ախանջ կէնի:
Կրիշկի մէկ ձէն կգեայ հա կը բեօռա:
— Դաւիթ, Դաւիթ, կանգնը՛, կազնը, չիւր իս գեամ:
287. Դաւիթ ձիու վերիւէն սինայ դառնայ, կրիշկի,
Կը տիսնայ Խանտիւթ խաթիւն բերիկ, յիտէն կը վազնը:
Է՛, էսքամ ժամանակ խանտիւթ խաթոււն բերիկ վուտ գի-
տըն չգրիր. միայ բերիկ, դաշտը մէջ կը վազնի, ոտ յըմեն ըլիբ ի
էրուն. վուտ որ տեղ դնի, վուտայ տեղ լիք էրուն կըլնը:
Վուր Դաւիթ կը տիսնի, կը դառնայ վերայ:
288. Վուր Դաւիթ կը դառնայ վերայ, Խանտիւթ խաթիւն
կըսի.
— Դաւիթ, տնաչէն, քեանը՛մ սկօն շեւտ կըռըկիս:
Դաւիթ կըսի. — Իս Սասունայ քեօ յապեօվ էկի.
Էսքան ճանբախ իս էկի, խասայ քիւ մօտ:
Մէկ գիր² քիւ իրիս պագնի, ըպա էն սելէն գիւ ըծը զար-
կեցի, հալպաթ կըռըկիմ:
289. Կըսի. — Դաւիթ, գիւ բմ՛ն չըս տիսիր, հալա գիւ
ջնէլ իս:
Իս քի լօմա չըմ էնի, որ գիւ հալա չըս տիսիր:
Դիւ էն քեառտուն մարգ տըսմը. որ իկիրէն տուն, նստիք
էն:
— Խա՛, էսայ Դաւիթ, տըսայ:

1 Ինչքան: 2 Անգամ: